

և իշխանների պատերի և եղիսկոպոսների դրութիւնը։ Խորաքանչիւր մի շրջան ենթարկուած է մի աւագ մագի (Magupat, Magierherr, նոր պարոկերէնում՝ Մոմբէդ-Մօբեդի)։ Իսկ այս բոլոր մոգերը ենթարկուած են ծայրագոյն աւագ մոգին (Մովքեռան Մովքետին-Մօբեդիան-Մօբեդի) արքայից արքաների օրինակով, որին և նա թագաւորում է։ Շուտով և երեսն եկան քրմական այդպիսի իշխանութեան հետքերը, անփոփոխ ծիսարաննը, մեղքի և քաւութեան համար եղած ճնշիչ հրամանները, դատարկ պատգամախոսութիւններով սահմանափակուած ու կախարդական արտեստով բաւականացող նոցա գիտութիւնը-այդ բոլորը միշտ եղել է զրադաշտական կրօնի մէջ, բայց դոքա ամենից շատ այս շրջանում հասան իրանց կատարեալ զարդաշմանը¹⁾։

Գ. Ալբունեան.

„ՊԱՐԱԿԱՆԻ“-ի մասին.

1879-ին Մօսկվայում տպուած՝ էմինի «Շարականի» ուուս. թարգմանութիւնը ամենքին յայտնի է, ի՞նչքան ես յեշում եմ, այդ գրքի մասին մեր գրականութեան մէջ ոչինչ չէ ասուած, անշուշտ այն վստահութեան պատճառով, որ մեր գրական աշխարհը ունէր գէպի թարգմանողի գիտնական հեղինակութիւնը։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ նրա՝ երկու լեզուներին էլ հաւասարապէս հմուտ լինելն ու լիով ձեռնհասութիւնը այդ գործում վեր են որեւ է կասկածից։

Բայց, որովհետեւ Շարականը, — որ էմին իր յառաջա-

1) Պարթևների և Սասանեանների մասին տես Վ հատու

բանում անուանում է «հոգեոր գանձարան», որտեղ հայ եկեղեցու լաւագոյն ներկայացուցիչները V—XIII դարը մտցրել են իրանց տուրքերը, —իբրև եկեղեցական օրհներգների մի ընտիր հաւաքածու, մեր տաղանդաւոր կրօնաւորների բարձր բանաստեղծական կորովով ու աւելանով է գրոշմուած, այս պատճառով ինձ առանձնապէս շահագրգոռում էր միշտ այն հանգամանքը, թէ ինչ աստիճան նրա մէջ, ճիշտ թարգմանութեան հետ, պահպանուած է և՛ մեր այդ երկնային աշուղների բանաստեղծական կրակը՝ տեղ-տեղ համեմուած աւետարանական առակների, աւելի ճիշտ՝ մէտաֆօրների շնորհալի ցուցումներով:

Սակայն, թերթելով Ռարանի-ը, ես եկայ այն եզրակացութեան, որ առհասարակ նրա բանաստեղծական ու առակաւոր մասերը զոհ են բերուած մեկնողականին իսկ դա ամենաքիչ՝ շատ ցաւալի է, որովհետեւ շարական-ների աղը իսկապէս նրանց բանաստեղծական գունաւորութնամբ ու աւետարանական առակներով արտայայտուած լինելու մէջն է, և ոչ թէ վարդապետական ու դաւանաբանական չոր ու ցամաք մտքերը յուղելու, որոնք, անշուշտ, շատ բան չեն կարող ասել ուսւ կարդացողի սրտին, որի համար արուած է այդ թարգմանութիւնը:

Կարելի է, առարկողներ լինեն, թէ էմին այդ թարգմանութիւնն արել է, ինչպէս ինքն էլ մի քանի տեղ կըրկնում է, միմիայն «ուսւ կարդացողին ծանօթացնելու մեր եկեղեցու վարդապետութեանը»։ Բայց դա չէ խանգարում, որ մեր եկեղեցու վարդապետութիւնը ուսւ կարդացողի առաջը դնելու հետ, ալախօսիկ վարդապետների շունչն ու հոգին էլ, որոնցով նրանք գունաւորել են իրանց մըտքերը, անբաժան լինէին իրանց վարդապետութիւնից։

Ի՞նչ և է։

Իմ նպատակից դուրս լինելով այս անգամ համեմատութիւններով զբաղուելը, շահագրգոռուղներին գաղափար տալու համար, ես միայն մէկ նմուշ կըերեմ։

1. «Առերբգ սրբոց երրորդութիւն, զմեզ մաքրեան քեզընակութիւն, շնորհեան ընդ մանկանցն առագաստի՝ հանգ-

շի ընդ քեզ ի յանկողնի. Տուր զիայցուած բարեկամին զիոնի Երից նկանակին...»:

1. «Святая святыхъ, Тройца! очисти и содѣлай насъ твоимъ жилищемъ; дай съ отроками чертога почить съ Тобою въ славѣ Твоей: дай намъ твердость въ вѣрѣ, надеждѣ и любви...».

Տարբերութիւնը պարզ է:

Յայտնի է, որ Շնորհալի Ներսէս, Յիսուսի հիւսած սիրուն մէտափօրով, ուղեցել է աւելի բարեձևութիւն ու ազգուութիւն տալ իր խնդրուածքին, յիշեցներս նրան իր առակը: Բայց Էմին այդ ուշագրաւ անկնարկը մի կողմ դրած, Շնորհալու խօսքերի լոկ կմախքն է դնում ուուս կարգացողի առաջը, —մի բան, որ, անշուշտ, հեղինակն էլ կարող էր անել, բայց չէ արել, իր արածը ուուսերէն թարգմանողի արածից գերագասելով։ Իմ կարծիքով, Էմին նոյնութեամբ պ! տք է թարգմանէր, իսկ մեկնութիւնը, —որ, յամենայն դէպս, իրանից չէր պահանջւում, — կարեոր դէպքերում, ծանօթութեան մէջ կարող էր գնել։

Իր առաջաբանի VII երեսում նա գրում է. «ցանկանալով տալ այս դրվի՝ այսպէս ասած, ճիշտ պատկերը, մենք աշխատել ենք մօտ լինել բնագրին. այս պատճառով շատ տեղերում ստիպուած էինք իսկականի գեղեցկութիւնը զոհել թարգմանութեան ճշտութեանը»։ Որ ճիշտ պատկերը տրուած չէ, այդ արդէն իմ բերած օրինակից էլ երեւում է. իսկ եթէ նա էլ «իսկականի գեղեցկութիւնը» ասելով, նարականի՝ իմ ակնարկած բանաստեղծական ու առակաւոր կողմերն է հասկանում, այն ժամանակ պէտք է ասել, որ բերած զոհը մեծ զոհ է»։

Բայց, ինչպէս երեւում է Էմինի նոյն իսկ թարգմանութիւնը անսխալ չէ՝, գոնէ այդպէս են կարծել տալիս այդ թարգմանութեան ուղղակի առաջին տողերը։ Իսկապէս սխալը նախադասութեան անդամների միմեանց հետ ունեցած յարաբերութեան մէջն է, որից և մտքի յեղաշրջում է առաջ եկել։ Շատ կարելի է, նրա դրվի մէջ դա միակ սխալն է, յամենայն դէպս, այդ հանգամանըը կաս-

կածի ստուեր է գցում թարգմանութեան ուրիշ տեղերի
վրայ էլ, թէպէտ առաջին հայեացը այդպիսի բան չէ
նկատում:

Ահա պատուիրը:

2. «Пойте, сыны Сиона, новую пѣнь въ рождество
Матери Господа; ибо нынѣ рожденная отъ неплодной ут-
робы, родила виѣвременно-Рожденаго отъ Отца; благосло-
вите даровавшаго намъ Мать Свѣта»

2. «Երգեցէք, որդիիք Սիօնի, երգ նոր ի ծննդեան
մօր տեառն. քանզի, որ ծնաւ զանժամանակն ի հօրէ
ծնեալն՝ այսօր ծնաւ յամուլ արգանտէ. տուք օրհնութիւն
տուղին մեզ զմայրն լուսոյ»:

**Այսեղ գնում եմ երկուսի էլ իմաստը, ինչպէս ես
եմ հասկանում:**

Թուսերէնը. Սիօնի որդիք, նոր երգ երգեցէք տիրոջ
մօր ծնունդին. որովհետեւ, նա, որ այսօր ծնուել է ամուլ
արգանտից (կամ՝ այսօր ամուլ արգանտից ծնուածը), ծնել
է հօրից անծամանակապէս ծնուածին. օրհնեցէք նրան,
որ տուել է մեզ լոյսի մայրը:

Գրաբարը. Սիօնի որդիք, նոր երգ երգեցէք տիրոջ
մօր ծնունդին. որովհետեւ, նա, որ ծնել է հօրից անժա-
մանակապէս ծնուածին, այսօր ծնուեց ամուլ արգանտից.
օրհնեցէք նրան, որ տուել է մեզ լոյսի մայրը:

Ինչպէս նկատելի է, սխալը պատճառաբանական է:
Մինչդեռ բնագրի մէջ նոր երգ երգելու ուրախու-
թիւնը պատճառաբանուած է նրաննվ, որ «այսօր ծնուել է
տիրոջ մայրը», թարգմանութեան մէջ նոյն ուրախութիւնը
պատճառաբանուած է նրաննվ, որ «տիրոջ մայրը ծնել է
հօրից անժամանակապէս ծնուածին». Այն ինչ՝ ուրախու-
թիւնը՝ ծնողի ծնուելու առիթով է, ոչ թէ ծնուածի:

Հետեւապէս, ոռւսերէնում պէտք է լինէր.—

Пойте, сыны Сиона, новую пѣнь въ рождество Матери
Господа; ибо родившая виѣвременно-Рожденаго отъ Отца,
нынѣ родилась отъ неплодной утробы; благословите даро-
вавшаго намъ Мать Свѣта.

ի՞նչպէս երեում է, Էմին, որ Հ. Գաբրիէլ Աւետիքեանցի «բացատրութիւն շարականաց» անունով աշխատութիւնը «միշտ աշքի առաջ է ունեցել», — գործի էն սկզբումը նրան դիմելու պէտքը չէ զգացել։

Տեսնենք, մահրամասն համեմատութիւնը ինչ ցոյց կտայ։

Էմի. Բահ. Նազարեան.

1 Մայիսի 1904 թվականի ապրիլ յանվար 1905 թվականի ապրիլ 20-

Մօկուս։ Ե ժամանակ մարդու մասնաւունք և մարդաբանութեան առջևը ազգագույն կարգի մասնաւունքը է։ Առաջին առջևը աշխատիք առաջին առաջին առջևի առջևունքը։ Առաջին առջևը համար բարձութագույն է։ Տարբերակը ամենահայտնագույն է ու առաջին առջևի առջևունքը։ Առաջին առջևի առջևունքը բարձութագույն է։ Տարբերակը ամենահայտնագույն է ու առաջին առջևի առջևունքը։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿՈՆՏ

(Մահուան հարիւրամեակի առքի)։

Բոլոր այս ազդեցութիւններին անարգել կերպով ենթարկուեցաւ Կանուը, որ բարերախտաբար երկարատև երիտասարդութիւն ու զարգացման ընդարձակ ըջան էր վայելում։ Ամենազօրեղ և անմիջական կերպով նորա զգացմունքների մէջ յուղումն առաջացրին Ռուսոյի գրուածքները մի յօդուածի մէջ (Fragmente aus dem Nachlass)։ Նա հետեւալ կերպով արտայատեց այդ յեղաշըջումը, որ առաջացրել էր նորա մէջ Ռուսոն։ «Աս իմ անձնական հակումների շնորհիւ հետազոտող եմ։ Աս զգում եմ զիտութեան ծարաւ և բուռն ձգտում առաջ գնալու անոր սահմաններում։ Կար ժամանակի, երբ ես կարծում էի թէ իմ այդ գործունէութիւնը պատիւ է բերում մարդկութեան և արհամարհում էի խուժանը, որ ոչինչ չգիտեմ այդ գործունէութեան մասին։ Ռուսոն ինձ ուղիղ ճանապարհի ընթեց։ Այդ կարծեցեալ առաւելութիւնը կորցրեց իւր արժէքն իմ աշքին։ Աս սովորեցի յարգել մարդկանց և աւելի անօգտակար կհամարէի ինձ քան հասարակ մշակը, եթէ չհաւատայի, որ իմ այդ հետազոտութիւնները կարող են արժէք ընծայել բոլոր մնացեալներին և մարդկութեան իրաւունքները վերականգնել։